

**«Պահեստագործի սպայական կազմի պարտադիր
զինվորական ծառայության 2022 թվականի
գորակոչ հայտարարելու և գորացրում կատարելու
մասին» Կառավարության որոշման նախագիծ**

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

___ 2022 թվականի N ___-Ն

**ՊԱՀԵՍՏԱԳՈՐԾԻ ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԶՈՐԱԿՈՉ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԵՎ ԶՈՐԱՑՐՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով՝ Կառավարությունը որոշում է.

1. Հայտարարել 2022 թվականի դեկտեմբերի 26-ից մինչև 2023 թվականի փետրվարի 24-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պահեստագործի սպայական կազմում հաշվառված՝ մինչև 35 տարեկան արական սեռի բժիշկ-մասնագետների պարտադիր զինվորական ծառայության գորակոչ (այսուհետ՝ պահեստագործի սպայական կազմի գորակոչ)՝ ծառայության ժամկետը սահմանելով երկու տարի:
2. Սահմանել պահեստագործի սպայական կազմի գորակոչի ենթակա անձանց թվաքանակը՝ մինչև 10 բժիշկ-մասնագետ:
3. Պահեստագործի սպայական կազմի գորակոչի շրջանակներում մինչև 2023 թվականի փետրվարի 24-ը ներառյալ գորացրել <<Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին>> օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված ժամկետում պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցած զինծառայողներին:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

1) օրենքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո յոթնօրյա ժամկետում ընդունել պահեստագործի սպայական կազմի բժիշկ-մասնագետների պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի զորակոչի անցկացման և օրենքով սահմանված ժամկետում պահեստագործի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունն անցած զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելու մասին հրաման:

2) ապահովել օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն պահեստագործի սպայական կազմի զորակոչի մանդատային հանձնաժողովի ստեղծումը:

3) պահեստագործի սպայական կազմի զորակոչից խուսափող քաղաքացիների տվյալներն ուղարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներ, իսկ զորակոչի ավարտից հետո՝ նրանց վերաբերյալ կազմված նյութերը Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության համապատասխան կայազորային քննչական բաժիններ:

5. Հայաստանի Հանրապետության նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների և կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևերից) ղեկավարներին՝

1) հայտարարված պահեստագործի սպայական կազմի զորակոչին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում չներկայացած կամ քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող քաղաքացիների վերաբերյալ տվյալներ ստանալուց հետո նրանց նկատմամբ կիրառել աշխատանքային, տնտեսական ու այլ ոլորտներում՝ օրենքով նախատեսված սահմանափակումներ և գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին:

2) իրավասության սահմաններում ապահովել պահեստագործի սպայական կազմի զորակոչի ենթակա քաղաքացիների ներկայանալը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ:

6. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինների միջոցով հյուպատոսական հաշվառման կանգնած և պահեստագործի սպայական կազմի զորակոչի ենթակա քաղաքացիներին ծանուցել օրենքի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ ներկայանալու համար:

2) աջակցել օտարերկրյա պետություններում գտնվող՝ պահեստագործի սպայական կազմի զորակոչի ենթակա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձին և ապահովել դրա մասին իրազեկումը:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության
գորակոչային և գորահավաքային համալրման ծառայությանը:

7. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին, Հայաստանի
Հանրապետության ազգային անվտանգության ծառայության
տնօրենին՝ պահեստագործի սպայական կազմի գորակոչի ենթակա
քաղաքացիների կողմից գորակոչից խուսափելու դեպքերը կանխելու
նպատակով պահեստագործի սպայական կազմի գորակոչի ընթացքում
ուժեղացնել վերահսկողությունը Հայաստանի Հանրապետության
սահմանային հաղորդակցության ուղիներում:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՎԱՐՉԱՊԵՏ
ՓԱՇԻՆՅԱՆ**

Ն.

« » _____ 2022թ.

Ք. Երևան